

Ալիկ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՊՏՀ
ասպիրանտ

Ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ, ապա՝ «Մակրոտնտեսական վերլուծություն» մագիստրոսական ծրագիրը: Ներկայումս սովորում է ՀՊՏՀ ասպիրանտուրայում: 2024 թվականից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում որպես կրտսեր հետազոտող:

https://orcid.org/0000-0002-5416-7565

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

DOI: 10.52174/2579-2989_2024.2-52

Հիմնաբառեր. *կրթական ծառայություններ, միջազգային ուսանողներ, կացության ծախսեր, համալսարանների վարկանշավորում, մրցակցություն*

Հոդվածում քննարկվում են կրթական ծառայությունների միջազգային շուկային և այդ շուկայում Հայաստանի ունեցած դերին վերաբերող հարցեր: Դիտարկվում են տարբեր հեղինակների վերլուծություններ միջազգային ուսանողների որոշում կայացնելու վրա ազդող գործոնների մասին: Ըստ այդմ՝ համեմատելով Հայաստանի և մի քանի եվրոպական երկրների տվյալներ՝ բացահայտվում են այն հիմնական մարտահրավերները, որոնց հետ առերեսվում են հայկական համալսարանները համապատասխան մրցակցային դաշտում: Ներկայացվում են նաև հայկական համալսարաններիհնարավորությունները, որոնց օգտագործմամբ կարելի է էական դրական տեղաշարժ ապահովել կրթական ծառայությունների արտահանման ոլորտում:

Կրթությունն առանցքային դեր է ունեցել մարդկության պատմության ամբողջ ընթացքում: Կրթության միջոցով ստեղծված արդյունքը, մասնավորապես՝ նորարարությունները հնարավորություն են տվել նպաստելու տեխնոլոգիական առաջընթացին և արտադրողականության մակարդակի բարձրացմանը: Այդ իսկ պատճառով երկրները միշտ էլ փորձել են ստեղծել բարձրակարգ կրթական համակարգ՝ գիտակրթական որակյալ արդյունք ապահովելու համար: Միաժամանակ, տնտեսության զարգացման և գլոբալացման ներկա պայմաններում, երբ մարդկային կապիտալի շարժը երկրների միջև հեշտացել է, մի երկրի կրթական համակարգը վերածվել է ոչ միայն այդ երկրի ռեզիդենտների, այլև ոչ ռեզիդենտների սպառման օբյեկտի: Այս համատեքստում կրթությունը դարձել է ինչպես երկրների ար-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Հայաստանում սովորող միջազգային ուսանողների թվաքանակն ըստ ժամանման երկրների, 2021 թ.[1]

տաքին առևտրաշրջանառության կարևոր ուղղություններից մեկը, այնպես էլ մարդկային կապիտալ ներգրավելու միջոց: Այսպիսով՝ ձևավորվել է կրթական ծառայությունների միջազգային շուկա, իսկ երկրները սկսել են մրցակցել այդ ծառայություններն արտահանելու համար:

Հայաստանը կրթական ծառայությունների միջազգային շուկայում փոքր մասնաբաժին ունի: 2021 թվականին արտերկրում կրթություն ստացող հայ ուսանողների թվաքանակը եղել է 2338, որն ամբողջ աշխարհում միջազգային ուսանողների թվաքանակի 0.05 տոկոսն է: 2021 թվականին Հայաստանում կրթություն ստացող միջազգային ուսանողների թվաքանակը եղել է 5681, որը կազմել է ամբողջ աշխարհում միջազգային ուսանողների թվաքանակի 0.13 տոկոսը: Հայաստանը միջազգային ուսանողներ հիմնականում ընդունում է Հնդկաստանից և Ռուսաստանից: Գծապատկեր 1-ում ներկայացված է 2021 թվականին Հայաստանում սովորող միջազգային ուսանողների թվաքանակն ըստ ժամանման երկրների:

Կարելի է նկատել, որ, բացի Հնդկաստանից և Ռուսաստանից, Հայաստանը կրթական ծառայություններ է մատուցում նաև Վրաստանից, Իրանից, Սիրիայից, Իրաքից և Հորդանանից ժամանած ուսա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Միջազգային ուսանողների թվաքանակն ըստ կրթական ծառայություններ արտահանող երկրների, 2021 թ.[2]

[1] ՀՀՎԿ, Տարեգիրք, Կրթություն և մշակույթ, 2022:
[2] OECD, Statistics, Enrolment of international students by country, 2021.

նողներին: Մյուս երկրների առումով, կրթական ծառայությունների արտահանման ծավալներն ավելի փոքր են:

Ներկայում կրթական ծառայությունների արտահանման ծավալներով աշխարհում առաջատար երկրներից են ԱՄՆ-ն, Միացյալ Թագավորությունը (ՄԹ), Ավստրալիան, Գերմանիան և Կանադան: Գծապատկեր 2-ում արտացոլված է 2021 թվականին ամենաշատ կրթական ծառայություններ արտահանող երկրներում միջազգային ուսանողների թվաքանակը:

Կրթական ծառայությունների արտահանումը հնարավորություն է տալիս մեծացնելու ինչպես երկրից ծառայությունների արտահանման ծավալները, այնպես էլ ներգրավելու նորարարական միտք ունեցող մարդկային կապիտալ: Այս մասին վկայում է տվյալ երկրներում նորարարական ստարտափների քանակը: 2022 թվականին միաեղջյուր ստրատափների[3] քանակով առաջին տեղում ԱՄՆ-ն էր, 4-րդում՝ ՄԹ-ն, 5-րդում՝ Ֆրանսիան և 6-րդում՝ Գերմանիան[4]:

Միջազգային ուսանողները օգուտ են բերում ոչ միայն ընդունող երկրներին, այլև իրենց հայրենիքին, որտեղ վերադառնալով՝ իրենց հետ տանում են գիտելիք ու փորձ: Այս առումով, կրթական ծառայություն ներմուծողները նույնպես մեծ օգուտ են ստանում՝ հիմք ստեղծելով իրենց երկրների զարգացման համար: Կրթական ծառայությունների միջազգային շուկայում կրթություն ներմուծողների մեջ բացարձակ առաջատարներն են Չինաստանը և Հնդկաստանը: Վերջիններս միջազգային ուսանողների թվաքանակով մի քանի անգամ գերազանցում են մյուս երկրների համապատասխան ցուցանիշը: Գծապատկեր 3-ում 2021 թվականին արտասահմանում սովորող ուսանողների թվաքանակն է՝ ըստ կրթական ծառայություններ ամենաշատ ներկրած երկրների:

Կարելի է նկատել, որ, բացի Չինաստանից և Հնդկաստանից, մեծ ծավալով կրթական ծառայություններ են ներմուծում Վիետնամը, Կորեան, Նիգերիան, Մարոկկոն, Սիրիան և այլ երկրներ: Այս բոլոր երկրները, իրենց ուսանողներին հնարավորություն տալով սովորելու արտասահմանյան համալսարաններում, հիմք են ստեղծում սեփական երկրներում նորարարությունների զարգացման համար: Ինչպես կրթական ծառայություններ արտահանող, այնպես էլ ներմուծող երկրների դեպքում կրթության և նորարարությունների զարգացումը երևում է միաեղջյուր ընկերությունների թվի միջոցով: Չինաստանը և Հնդկաստանը միաեղջյուր ընկերությունների թվով աշխարհում զբա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Արտասահմանում սովորող ուսանողների թվաքանակն ըստ կրթական ծառայություններ ներմուծող երկրների, 2021 թ.[5]

[2] OECD, Statistics, Enrolment of international students by country, 2021.
[3] Միաեղջյուր ստարտափ է կոչվում այն ընկերությունը, որի կապիտալը գերազանցում է 1 միլիարդ դոլարը:
[4] CB Insights, The complete list of unicorn companies, 2022 July.
[5] OECD, Statistics, Enrolment of international students by country, 2021.

ղեցնում են երկրորդ և երրորդ տեղերը[6]:

Գնահատելու համար՝ արդյո՞ք Հայաստանը գրավիչ է միջազգային ուսանողների համար, նախ՝ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ գործոններ են ազդում միջազգային ուսանողների վրա, երբ վերջիններս որոշում են ընդունում որևէ երկիր մեկնելու և տեղի համալսարանում սովորելու մասին: Միջազգային ուսանողների որոշումների վրա ազդող գործոնների վերաբերյալ գոյություն ունեն մի շարք տեսակետներ: Օրինակ, ըստ Պավարի, Դասգուպտայի և Վիսպուտայի, միջազգային ուսանողների ընտրության վրա ազդող ամենակարևոր գործոնը մշակութայինն է: Հեղինակների կարծիքով՝ միջազգային ուսանողներն ընտրում են այն երկրները, որոնք մշակութային և լեզվական նմանություններ ունեն իրենց հայրենիքի հետ[7]: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ միջազգային ուսանողների ընտրության վրա ազդում է ընդունող երկրի աշխարհագրական դիրքը: Ուսանողներն ընտրում են այն երկրները, որոնք աշխարհագրորեն մոտ են իրենց հայրենիքին, որը նվազեցնում է ինչպես հայրենիք վերադառնալու ծախսերը, այնպես էլ հեշտացնում ընտանիքի հետ հաղորդակցությունը[8]: Պիմպայի բնորոշմամբ՝ արտերկրում ուսանելու հարցում մեծ է ուսանողի ընտանիքի ազդեցությունը: Հետազոտություն իրականացնելով Թաիլանդի ուսանողների շրջանում՝ Պիմպան պարզել է, որ վերջիններիս որոշումների վրա ամենամեծ ազդեցությունն ունենում է հենց ընտանիքը[9]: Բացի մշակութայինից, աշխարհագրականից և ընտանեկանից, գոյություն ունեն նաև կրթական և սոցիալ-տնտեսական գործոններ, որոնք «ձգող» կամ «վանող» ներգործություն են ունենում ուսանողների վրա, երբ վերջիններս փորձում են ընտրել այն երկիրը, ուր ցանկանում են գնալ սովորելու[10]: Այդպիսի գործոններից են կրթական ծրագրերի որակը և համալսարանների ակադեմիական հեղինակությունը: Ըստ Նիկոլասի՝ միջազգային ուսանողները մեկնում են այն համալսարաններ, որոնք արդեն իսկ ունեն ակադեմիական հեղինակություն, և դրանց կողմից առաջարկվող կրթական ծրագրերի որակը հաստատված է այլ ուսանողների կողմից[11]: Միջազգային ուսանողների ընտրության վրա ազդող կարևոր սոցիալ-տընտեսական գործոններ են նաև կրթական ծառայություններ արտահանող երկրում կացության ծախսերը և անվտանգությունը: Կացության ծախսերը վերաբերում են բնակարանի վարձակալության, սննդի և հագուստի համար կատարվող վճարներին: Կացության փոքր ծախսերով և անվտանգ երկրներն ավելի պահանջված են միջազգային ուսանողների շրջանում[12]: Մեծ պահանջարկ են վայելում նաև այն երկրները, որոնք առանձնանում են գեղեցիկ բնությամբ, ճարտարապետական կոթողներով և մշակութային վայրերով[13]: Միջազգային ուսանողների վրա ազդող կարևոր գործոններից են նաև որակյալ կրթության վերաբերյալ պատմականորեն ձևավորված պատկերացումները, որոնց աղբյուրն արտասահմանում արդեն իսկ սովորած ուսանողների, ընտանիքի անդամների տպավորությունների և պատմական դեպքերի համադրումն է: Մասնավորապես, գաղութատիրական ժամանակներից սկսած, գաղութային երկրներում պատկերացում է ձևավորվել, որ որակյալ կրթություն կարելի է ստանալ միայն գաղութատեր երկրներում, և այդ մտայ-

[6] CB Insughts, The complete list of unicorn companies, 2022 July

[7] Sanjay Krishnapratap Pawar, Hirak Dasgupta & Swati Vispute, Analysis of factors influencing international student destination choice: a case of Indian HE, Journal of Further and Higher Educationm, 2019.

[8] Judith Eder, Wayne W. Smith & Robert E. Pitts, Exploring Factors Influencing Student Study Abroad Destination Choice, Journal of Teaching in Travel & Tourism, N10(3), 2010.

[9] Nattavud Pimpa, The Relationship Between Thai Students' Choices of International Education and their Families, International Education Journal Vol 5(3), 2004.

[10] Tim Mazzarol, Geoffrey N. Soutar, "Push-pull" factors influencing international student destination choice, International Journal of Educational Management, Vol. 16(2), 2002.

[11] Sarah Nicholls, Influences on International Student Choice of Study Destination: Evidence from the United States, Journal of International Students, Vol. 8(2), 2018.

[12] Jasvir Kaur Nachatar Singh, Jan Schapper, and Gavin Jack, The Importance of Place for International Students' Choice of University: A Case Study at a Malaysian University, Journal of Studies in International Education, Vol. 1(12), 2014.

[13] Syed Zamberi Ahmad & Frederick Robert Buchanan, Choices of destination for transnational higher education: "pull" factors in an Asia Pacific market, Educational Studies, 2016.

նությունը շարունակվում է մինչ այսօր[14]: Որոշ հեղինակների կարծիքով՝ միջազգային ուսանողների որոշումների ընդունման վրա մեծապես ազդում են հավաքագրման ծառայություններ իրականացնող գործակալությունները (recruitment agencies), որոնք հնարավորություն են տալիս նախ՝ ծանոթանալու կրթական ծառայություններ արտահանող երկրին, այնուհետև միայն կրթությունը կազմակերպելու այնտեղ[15]:

Միջազգային ուսանողների համար Հայաստանի գրավչությունը բացահայտելու նպատակով փորձենք մեր երկրի վերաբերյալ տվյալները համեմատել յոթ այլ երկրների՝ Բուլղարիայի, Էստոնիայի, Հունգարիայի, Լատվիայի, Լիտվայի, Լեհաստանի, Ռումինիայի համապատասխան տվյալների հետ: Նախ և առաջ, ուսումնասիրենք կացության ծախսերը, որոնց առումով ընտրվել են հետևյալ ցուցանիշները՝ քաղաքի կենտրոնում բնակարանի վարձավճար, քաղաքի արվարձաններում բնակարանի վարձավճար, մեկ տաբատի արժեք (Zara կամ H&M ապրանքանիշներ), մեկ զգեստի արժեք (Zara կամ H&M ապրանքանիշներ), մարզասրահ հաճախելու ամսական վճար, միջին ամսական կոմունալ ծախսեր, երթուղային տրանսպորտով մեկ ուղևորության տոմսի արժեք, մեկ լիտր կաթի արժեք, 500 գրամ հացի արժեք, 12 հատ ձվի արժեք, 1 կիլոգրամ կարտոֆիլի արժեք և 1,5 լիտր խմելու ջրի արժեք[16]: Աղյուսակ 1-ում վերոնշյալ ապրանքների և ծառայությունների արժեքներն են համեմատվող երկրներում՝ 2023 թվականին:

Աղյուսակ 1-ի տվյալներից կարելի է նկատել, որ ուսումնասիրվող երկրների շարքում կոմունալ ծախսերն ամենաէժանը Հայաստանում են՝ ամսական միջինում 110.6 ԱՄՆ դոլար, իսկ Լատվիայում՝ 320.68 ԱՄՆ դոլար՝ գրեթե երեք անգամ ավելի: Նույնը վերաբերում է տրանսպորտի արժեքին: Եթե Հայաստանում մեկ ուղևորության համար մարդը պետք է վճա-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Կացության ծախսերն ըստ համեմատվող երկրների (ԱՄՆ դոլար), 2023[17]

	Հայաստան	Բուլղարիա	Էստոնիա	Հունգարիա	Լատվիա	Լիտվիա	Լեհաստան	Ռումինիա
Քաղաքի կենտրոնում բնակարանի վարձ	869.33	417.33	640.66	468.95	482.55	638.9	845.65	438.37
Քաղաքի արվարձաններում բնակարանի վարձ	580.16	315.3	471.07	377.48	334.22	445.71	660.27	324.89
1 տաբատի արժեք	82.31	54.94	87.95	70.8	83.35	80.82	83.83	64.45
1 զգեստի արժեք	56.65	32.1	33.09	29.62	44.91	34.64	42.23	37.13
Մարզասրահ այցելելու ամսական վարձ	74.27	29.81	48.85	41.12	44.72	35.75	33.1	40.65
Միջին ամսական կոմունալ ծախս	110.6	113.18	282.5	145.3	320.68	202.94	257.96	142.65
Երթուղային տրանսպորտի մեկ ուղևորության արժեք	0.25	0.87	1.81	1.22	1.6	1.07	1.1	0.64
Կաթ (1 լ)	1.46	1.68	1.14	1.05	1.21	1.39	0.94	1.49
Հաց (500 գ)	0.7	0.98	1.18	1.46	1.41	1.59	1.18	1.12
Ձու (12 հատ)	2.15	3.21	2.67	2.59	2.69	2.64	2.92	3.08
Կարտոֆիլ (1 կգ)	0.68	0.98	0.91	1.11	0.81	0.84	0.79	0.87
Ջուր (1.5 լիտր)	0.68	0.64	0.98	0.47	0.83	0.85	0.6	0.73

[14] Stephen Wilkins and Jeroen Huisman, International student destination choice: the influence of home campus experience on the decision to consider branch campuses, Journal of Marketing for Higher Education, Vol. 21(1), 2011

[15] Nattavud Pimpa, The Influence of Peers and Student Recruitment Agencies on Thai Students' Choices of International Education, Journal of Studies in International Education, Vol. 7(2), Summer 2003

[16] Քանի որ նպատակ է դրվել արծարծվող թեման ուսումնասիրել միջազգային ուսանողների դիտանկյունից, ապա, որպես ավելի ակնառու տվյալներ, ընտրվել են միջազգային վերլուծական կենտրոնի հրապարակումները, որոնք մատչելի են ու առկա որոնողական հարթակներում: Հնարավոր է՝ այս տվյալները չհամապատասխանեն երկրների վիճակագրական կոմիտեների կողմից ներկայացվող ցուցանիշներին:

[17] Numbeo, Cost of Living, 2023.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Արտասահմանում սովորող ուսանողների թվաքանակն ըստ կրթական ծառայություններ ներմուծող երկրների, 2021 թ.[18]

րի 0,25 ԱՄՆ դոլար, ապա Էստոնիայում՝ 1.8 ԱՄՆ դոլար: Դրա փոխարեն՝ Հայաստանում ավելի թանկ են վարձով բնակարանները: Եթե Հայաստանում քաղաքի կենտրոնում բնակարանի վարձը 869 ԱՄՆ դոլար է, ապա Բուլղարիայում՝ ավելի քան երկու անգամ էժան՝ 417 ԱՄՆ դոլար: Նույնը վերաբերում է Երևանի արվարձաններում գտնվող վարձով բնակարաններին:

Հայաստանում, ուսումնասիրվող երկրների համեմատ, թանկ է նաև հագուստը: Օրինակ՝ մեկ տաբատի արժեքը Հայաստանում 82 ԱՄՆ դոլար է, իսկ Բուլղարիայում՝ 54 ԱՄՆ դոլար: Նույն կերպ՝ մեկ զգեստը Հայաստանում կարելի է գնել մոտ 56 ԱՄՆ դոլարով, իսկ Հունգարիայում՝ 29 ԱՄՆ դոլարով: Մարզասրահ այցելելու համար վճարը նույնպես Հայաստանում համեմատաբար բարձր է, մեկ ամսվա համար՝ մոտ 74 ԱՄՆ դոլար, իսկ Լեհաստանում, օրինակ, 33 ԱՄՆ դոլար:

Մեր երկրում ուսումնասիրվող երկրների համեմատ ավելի էժան է սնունդը, մասնավորապես՝ հացը, ձուն և կարտոֆիլը: Կաթն այստեղ ավելի էժան է, քան Բուլղարիայում և Ռումինիայում, իսկ ջուրն ավելի էժան, քան Էստոնիայում, Լատվիայում, Լիտվիայում և Ռումինիայում: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանում ապրելու և կրթություն ստանալու դեպքում ուսանողն ավելի քիչ կվճարի այնպիսի ապրանքների և ծառայությունների դիմաց, ինչպիսիք են կոմունալ ծառայությունները, տրանսպորտը և սնունդը: Մինչդեռ բնակարանային վարձը, հագուստը և մարզասրահ այցելելը Հայաստանում շատ ավելի թանկ են, քան համեմատվող երկրներում:

Ինչպես վերը նշեցինք, միջազգային ուսանողների համար կարևոր է նաև կրթական ծառայություններ արտահանող երկրի անվտանգությունը: Որքան երկիրն անվտանգ է, այնքան ավելի նպաստավոր է դառնում ուսանողների համար: Numbeo վերլուծական կենտրոնը հրապարակում է երկրների դասակարգումն ըստ անվտանգության աստիճանի, որտեղ հաշվի է առնում երկրներում կատարվող հանցագործությունների քանակը: Գծապատկեր 4-ում ներկայացված է ուսումնասիրվող երկրների դիրքն ըստ անվտանգության մակարդակի:

Գծապատկերի տվյալներից կարելի է նկատել, որ ուսումնասիրվող երկրների շարքում Հայաստանն ամենաանվտանգն է՝ զբաղեցնելով 7-րդ տեղը 142 երկրների շարքում: Հայաստանին հաջորդում են Էստոնիան (16), Լեհաստանը (28) և Ռումինիան (34): Անվտանգության առումով, ամենավատ ցուցանիշն ուսումնասիրվող երկրների շարքում Բուլղարիայինն է, որը զբաղեցնում է 46-րդ տեղը:

Միջազգային ուսանողների համար մեկ

[18] Numbeo, Safety Index by Country, 2023.

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Ուսումնասիրվող երկրների QS World University Ranking դասակարգման աղյուսակում ներառված համալսարանները և դրանց դիրքը, 2023 թ.[19]

Հայաստան		Բուլգարիա	
Երևանի պետական համալսարան	801-1000	Սոֆիայի «Սուրբ Կլիմենտ Օհրիդսկի» համալսարան	561-570
Հայ-ռուսական համալսարան	801-1000		
Լատվիա		**Լիտվա**	
Լատվիայի համալսարան	1001-1200	Կաունասի տեխնոլոգիական համալսարան	801-1000
Ռիգայի տեխնոլոգիական համալսարան	751-800	Վիլնյուսի համալսարան	400
Ռիգայի Ստրադինշի անվան համալսարան	801-1000	Վիլնյուսի Գեդիմինիայի տեխնոլոգիական համալսարան	701-750
Էստոնիա		**Հունգարիա**	
Տալլինի համալսարան	1001-1200	Լորանդ Էտվյոշի անվան համալսարան	701-750
Տալլինի տեխնոլոգիական համալսարան	701-750	Սեգեդի համալսարան	551-560
Տարտուի համալսարան	296	Բուդապեշտի տեխնոլոգիայի և տնտեսագիտության համալսարան	801-1000
		Պեչի համալսարան	701-750
		Հունգարիայի գյուղատնտեսության և բնական գիտությունների համալսարան	801-1000
Լեհաստան		**Ռումինիա**	
Վարշավայի համալսարան	284	Բուխարեստի համալսարան	1001-1200
Վարշավայի տեխնոլոգիական համալսարան	521-530	Ալեքսանդր Լուսն Կուզայի անվան համալսարան	1201-1400
Ադամ Միցկևիչ անվան համալսարան	801-1000	Տրանսիլվանիայի համալսարան	1201-1400
Նիկոլայ Կոպեռնիկոսի անվան համալսարան	801-1000	Կլուժ-Նապոկայի տեխնոլոգիական համալսարան	1201-1400

այլ կարևոր հանգամանք է կրթական ծառայություններ արտահանող երկրների համալսարանների վարկանիշը: Համալսարանի բարձր վարկանիշն ինքնին վկայում է վերջինիս կրթական ծրագրերի, դասախոսական կազմի որակի և բուհի հեղինակության մասին: Ուսումնասիրվող երկրների համալսարանների վարկանիշները դիտարկվել են ըստ QS World University Ranking վարկանշավորման կազմակերպության տրամադրած ցուցանիշների: Համալսարաններն այդպիսով դասակարգվում են համաձայն ակադեմիական հեղինակության, շրջանավարտների աշխատանքի տեղավորման արդյունքների, միջազգային ամսագրերում համալսարանի կողմից տպագրված հոդվածների, դրանց հղումների քանակի և այլ գործոնների:

Աղյուսակ 2-ի տվյալներից կարելի է նկատել, որ հայկական համալսարաններից դասակարգման աղյուսակում ներառված են միայն Երևանի պետական համալսարանը (801-1000) և Հայ-ռուսական համալսարանը (801-1000): Ուսումնասիրվող երկրների համալսարանների շարքում ամենաբարձր դիրքը զբաղեցնում են լիտվական Վիլնյուսի համալսարանը (400), լեհական Վարշավայի համալսարանը (284) և էստոնական Տարտուի համալսարանը (296):

Միջազգային ուսանողներ ներգրավելու համար շատ կարևոր է նաև համալսա-

[19] QS University Ranking, QS World University Ranking, 2023.

ռանների ինտերնետային կայքերի հագեցվածությունը: Որքան համալսարանական կայքում առկա են շատ տեղեկություններ համալսարանի մասին, այնքան միջազգային ուսանողներն ավելի մեծ հնարավորություն են ունենում պատկերացում կազմելու և՛ տվյալ բուհի, և՛ տվյալ երկրի մասին: Այս առումով, հետաքրքրական է Webometric Ranking of World Universities դասակարգման աղյուսակը, որտեղ տեղ են գտնում համալսարանական կայքերի բովանդակության ծավալի ու հրապարակումների տեսանելիության ցուցանիշները (աղյուսակ 3):

Աղյուսակ 3-ի տվյալներից կարելի է նկատել, որ Հայաստանում ամենաբարձր վարկանիշ ունեցող կայքը Երևանի պետական համալսարանինն է, որն էլ զբաղեց-

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Ուսումնասիրվող երկրներում ամենաճանաչված հինգ համալսարանների վարկանշային դիրքն ըստ Webometric Ranking of World Universities դասակարգման[20]

Հայաստան		Բուլղարիա	
Երևանի պետական համալսարան	2970	Սոֆիայի Սուրբ Կլիմենտ Օհրիդսկի համալսարան	1140
Հայաստանի ամերիկյան համալսարան	4623	Նոր բուլղարական համալսարան	3650
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	9217	Բուլղարիայի ամերիկյան համալսարան	6094
Երևանի պետական բժշկական համալսարան	5074	Պլովդիվի համալսարան	2984
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	8116	Ազգային և համաշխարհային տնտեսության համալսարան	4400
Լատվիա		**Լիտվա**	
Լատվիայի համալսարան	1167	Կաունասի տեխնոլոգիական համալսարան	1766
Ռիգայի տեխնոլոգիական համալսարան	1389	Վիլնյուսի համալսարան	728
Լատվիայի բժշկական ակադեմիա	2916	Վիլնյուսի Գեդիմինիայի տեխնոլոգիական համալսարան	1689
Տուրիբայի համալսարան	6589	Առողջապահական գիտությունների լիտվական համալսարան	2687
Դաուգավպիլսի համալսարան	4223	Կլայպեդայի համալսարան	2878
Էստոնիա		**Հունգարիա**	
Տալլինի համալսարան	1902	Լորանդ Էտվյոշի անվան համալսարան	381
Տալլինի տեխնոլոգիական համալսարան	1120	Սեգեդի համալսարան	677
Էստոնիայի բնական գիտությունների համալսարան	1970	Բուդապեշտի տեխնոլոգիայի և տնտեսագիտության համալսարան	684
Էստոնիայի բիզնես դպրոց	6314	Պեչի համալսարան	939
Տարտուի համալսարան	451	Հունգարիայի գյուղատնտեսության և բնական գիտությունների համալսարան	1990
Լեհաստան		**Ռումինիա**	
Վարշավայի համալսարան	763	Բուխարեստի համալսարան	1536
Վարշավայի տեխնոլոգիական համալսարան	651	Ալեքսանդր Լոան Կուզայի անվան համալսարան	1019
Ադամ Միցկևիչի անվան համալսարան	585	Տրանսիլվանիայի համալսարան	1360
Նիկոլայ Կոպեռնիկոսի անվան համալսարան	643	Տիմիշոարայի արևմտյան համալսարան	2581
Վարշավայի բժշկական համալսարան	1013	Կլուժ-Նապոկայի տեխնոլոգիական համալսարան	1555

[20] Webometric, Ranking of World Universities, 2024.

նում է դասակարգման աղյուսակի 2970-րդ տեղը: Երկրորդ տեղում Հայաստանի ամերիկյան համալսարանի (4623), իսկ երրորդ տեղում Երևանի պետական բժշկական համալսարանի (5074) կայքն է: Ուսումնասիրվող երկրների շարքում ամենաբարձր վարկանշով կայքեր ունեն Լորանդ Էտվյոշի անվան համալսարանը, Տարտուի համալսարանը և Ադամ Միցկևիչի անվան համալսարանը: Կարելի է նկատել, որ ուսումնասիրվող երկրների համալսարանների շարքում հայկական համալսարանների կայքերի վարկանիշն ամենացածրն է, ինչն էականորեն կարող է ազդել միջազգային ուսանողների որոշում կայացնելու վրա:

Մեկ այլ կարևոր գործոն է կրթական ծրագրերի արժեքը: Իհարկե, աշխարհի լավագույն համալսարաններում կրթություն ստանալը բավական թանկ հաճույք է, սակայն, միաժամանակ, պահանջարկն այդ առումով նույնպես բարձր է: Հետևաբար՝ ավելի փոքր ծավալով կրթական ծառայություններ արտահանող երկրներում կարևոր է առաջարկվող կրթական ծրագրերի ցածր արժեքը: Աղյուսակ 4-ում ուսումնասիրվող երկրների համալսարանների կրթական ծրագրերի միջին արժեքներն են միջազգային ուսանողների համար:

Աղյուսակ 4-ի տվյալներից կարելի է նկատել, որ Երևանի պետական համալսարանում միջազգային ուսանողների համար բակալավրական կրթությունը միջինում կարժենա 1700 եվրո, իսկ մագիստրոսական կրթությունը՝ 1750 եվրո: Հայաստանի ամերիկյան համալսարանում կրթա կան ծրագրերի արժեքը համեմատաբար ավելի բարձր է, քան մյուս հայկական համալսարաններում: Հայաստանի ամերիկյան համալսարանում բակալավրական և մագիստրոսական կրթություն ստանալը միջազգային ուսանողների համար արժե 8600 եվրո: Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի բակալավրական կրթական ծրագրերով միջազգային ուսանողների կրթությունը կարժենա 2200 եվրո, իսկ մագիստրոսական կրթական ծրագրերով՝ 3000 եվրո: Երևանի պետական բժշկական համալսարանում կրթություն ստանալու համար միջազգային ուսանողները պետք է վճարեն 5600 եվրո: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, որը ուսումնասիրվող հայկական համալսարանների մեջ ամենացածր գինն է առաջարկում միջազգային ուսանողներին, բակալավրական կրթությունը կարժենա 1300 եվրո, իսկ մագիստրոսականը՝ 1400 եվրո: Այսինքն՝ ուսումնասիրվող հայկական հինգ համալսարաններում բակալավրական կրթության միջին արժեքը կկազմի 3880 եվրո, իսկ մագիստրոսական կրթության միջին արժեքը՝ 4070 եվրո: Նույն կերպ, եթե հաշվարկենք ուսումնասիրվող մյուս երկրներում բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերի միջին արժեքները, ապա կտեսնենք, որ հայկական համալսարանների առաջարկած բակալավրական կրթական ծրագրերը թանկ են միայն լատվիական և ռումինական, իսկ մագիստրոսական կրթական ծրագրերը՝ միայն ռումինական համալսարանների առաջարկած կրթական ծրագրերի համեմատ:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ են դառնում մի քանի մարտահրավերներ, որոնց հայկական համալսարանները բախվում են միջազգային ուսանողների համար մրցակցությունում: Այդպիսի մարտահրավերներից մեկը հայկական համալսարանների վարկանիշն է: Ինչպես վերը տեսանք, հայկական համալսարանների վարկանիշը մյուս համալսարանների համեմատ բավական ցածր է, որի պատճառները մի քանիսն են: Նախ՝ հայկական համալսարանները չունեն հավատարմագրված բավարար քանակի կրթական ծրագրեր, որոնց առկայությունը հնարավորություն կտա միջազգային ուսանողներին ոչ միայն համոզված լինելու դրանց որակի, այլև ավարտելուց հետո հեշտությամբ արտերկրում աշխատանք գտնելու մեջ: Գոյություն ունեն հավատարմագրող մի քանի կազմակերպություններ: Մասնավորապես՝ International Commission on Accreditation of Public Administration-ը (ICAPA)[22] ՄԱԿ-ի կողմից ստեղծված կառույց է, որը զբաղվում է ամբողջ աշխարհում

[22] International Commission on Accreditation of Public Administration · iasia·iias·iisa·org

ԱՂՅՈՒՍԱԿ 4

Ուսումնասիրվող երկրներում ամենաճանաչված հինգ համալսարանների կրթական ծրագրերի միջին արժեքները (ուսումնական տարի, եվրո)[21]

Հայաստան			Բուլղարիա		
Համալսարանի անվանում	ԲԱ	ՄԱ	Համալսարանի անվանում	ԲԱ	ՄԱ
Երևանի պետական համալսարան	1700	1750	Սոֆիայի Սուրբ Կլիմենտ Օհրիդսկի համալսարան	2500	2200
Հայաստանի ամերիկյան համալսարան	8600	8600	Նոր բուլղարական համալսարան	4700	4700
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	2200	3000	Բուլղարիայի ամերիկյան համալսարան	6500	6600
Երևանի պետական բժշկական համալսարան	5600	5600	Պլովդիվի համալսարան	4000	7500
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	1300	1400	Ազգային և համաշխարհային տնտեսության համալսարան	3800	4000
Լատվիա			**Լիտվա**		
Լատվիայի համալսարան	4000	4500	Կաունասի տեխնոլոգիական համալսարան	4500	4800
Ռիգայի տեխնոլոգիական համալսարան	3900	4600	Վիլնյուսի համալսարան	4000	4000
Լատվիայի բժշկական ակադեմիա	4000	4500	Վիլնյուսի Գեդիմինիայի տեխնոլոգիական համալսարան	4200	5600
Տուրիբայի համալսարան	2850	3300	Առողջապահական գիտությունների լիտվական համալսարան	9300	9300
Դաուգավպիլսի համալսարան	2400	4200	Կլայպեդայի համալսարան	3400	4800
Էստոնիա			**Հունգարիա**		
Տալլինի համալսարան	4700	4300	Լորանդ Էտվյոշի անվան համալսարան	6000	6000
Տալլինի տեխնոլոգիական համալսարան	4400	4400	Սեգեդի համալսարան	9500	9500
Էստոնիայի բնական գիտությունների համալսարան	4700	1900	Բուդապեշտի տեխնոլոգիայի և տնտեսագիտության համալսարան	6500	6500
Էստոնիայի բիզնես դպրոց	5500	7500	Պեշի համալսարան	6000	6000
Տարտուի համալսարան	5500	5500	Հունգարիայի գյուղատնտեսության և բնական գիտությունների համալսարան	4500	5500
Լեհաստան			**Ռումինիա**		
Վարշավայի համալսարան	3200	3500	Բուխարեստի համալսարան	2400	2400
Վարշավայի տեխնոլոգիական համալսարան	6000	6500	Ալեքսանդր Լուան Կուզայի անվան համալսարան	3800	3800
Ադամ Միցկևիչի անվան համալսարան	700	800	Տրանսիլվանիայի համալսարան	3800	3800
Նիկոլայ Կոպեռնիկոսի անվան համալսարան	2300	3000	Տիմիշոարայի արևմտյան համալսարան	1500	1500
Վարշավայի բժշկական համալսարան	13000	13000	Կլուժ-Նապոկայի տեխնոլոգիական համալսարան	3800	3800

[21] Study in Europe - www.study.eu

համալսարանների կողմից առաջարկվող կրթական ծրագրերի հավատարմագրմամբ, European Association for Public Administration Accreditation-ը (EAPAA)[23] Եվրամիության կողմից ստեղծված կառույց է, որի հավատարմագրած կրթական ծրագրերն ընդունելի են լինում Եվրամիության անդամ բոլոր երկրներում: Իսկ, օրինակ, Network of Schools of Public Policy, Affairs and Administration-ը (NASPAA)[24] մասնագիտացած է մագիստրոսական ծրագրերի հավատարմագրման մեջ: Այս կազմակերպություններից յուրաքանչյուրի կողմից հավատարմագրվելը կարևոր քայլ կլինի հայկական համալսարանների համար:

Հայկական համալսարանների համար մեկ այլ մարտահրավեր է Հայաստանում կացության ծախսերի մեծ լինելը: Ուսումնասիրվող երկրների շարքում դիտարկելով կացության ծախսերի տարբերությունները՝ պարզ դարձավ, որ Հայաստանում բնակարանային վարձը, հագուստի և մարզասրահ այցելելու գներն ավելի բարձր են, սակայն ավելի էժան են կոմունալ ծառայությունները, տրանսպորտը և սնունդը: Կացության ծախսերից ամենամեծ մարտահրավերը վերաբերում է բնակարանային վարձին, որը կարող է լուրջ խնդիր դառնալ միջազգային ուսանողների համար: Այս խնդրի լուծումներից մեկը կարող է լինել համալսարանական հանրակացարանների առկայությունը: Հանրակացարանները պետք է լինեն վերանորոգված ու հարմարավետ, իսկ վարձավճարը՝ ցածր՝ մրցունակ արտասահմանյան համալսարանների կացարանների գների համեմատ: Մեկ այլ խնդիր է հանրակացարանների հեռավորությունը համալսարաններից: Հայաստանում համալսարանները, որպես կանոն, քաղաքի կենտրոնում են, որը բավական ծանրաբեռնված տարածք է, և որտեղ հանրակացարան հիմնադրելը լուրջ ֆինանսական ծախսեր է պահանջում: Այդ է պատճառը, որ հայկական համալսարանների հատուկենտ հանրակացարաններն արվարձաններում են: Google Map-ի միջոցով եթե դիտարկենք համալսարանների և դրանց հանրակացարանների միջև եղած հեռավորությունները, հաշվարկված րոպեներով՝ ոտքով քայլելու դեպքում, ապա կտեսնենք, որ Երևանի պետական համալսարանից մինչև վերջինիս հանրակացարան ոտքով կարելի է հասնել 1 ժամ 25 րոպեում: Նույն կերպ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանից մինչև վերջինիս հանրակացարան կարելի է հասնել 1 ժամ 15 րոպեում: Այս առումով, ամենակարճ հեռավորությունը Երևանի պետական բժշկական համալսարանի և իր հանրակացարանի միջև է, որտեղ ոտքով կարելի է հասնել 50 րոպեում: Համեմատության համար կարող ենք դիտարկել ուսումնասիրվող երկրների համանման ցուցանիշը: Օրինակ՝ Վարշավայի համալսարանից մինչև իր հանրակացարան հեռավորությունը 30 րոպե տևողությամբ ոտքով ճանապարհ է, Տարտուի համալսարանից՝ 14 րոպե, իսկ Վիլնյուսի համալսարանից՝ 25 րոպե: Սա, առաջին հայացքից, կարող է նաև լուրջ խնդիր չթվալ, սակայն միջազգային ուսանողների առումով, այդքան էլ այդպես չէ:

Հայկական համալսարանների հանրակացարանների գները նույնպես մրցունակ չեն: Երևանի պետական բժշկական համալսարանի հանրակացարանի մեկ ամսվա վարձակալության արժեքը տատանվում է 105-140, Երևանի պետական համալսարանինը՝ 70-140, իսկ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանինը՝ 45-55 եվրոյի սահմաններում: Համեմատության համար նորից դիտարկենք ուսումնասիրվող երկրների համանման ցուցանիշը: Օրինակ՝ Վարշավայի համալսարանի հանրակացարանի մեկ ամսվա վարձակալության արժեքը տատանվում է 117-120, Տարտուի համալսարանինը՝ 17-30, իսկ Վիլնյուսի համալսարանինը՝ 70-105 եվրոյի սահմաններում: Հետևաբար՝ հայկական համալսարանների հանրակացարանները մի կողմից անհարմար են իրենց հեռավորության, մյուս կողմից՝ թանկության պատճառով:

Ներկայում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացածության պայմաննե-

[23] European Association for Public Administration Accreditation - eapaa.eu
[24] Network of Schools of Public Policy, Affairs and Administration - www.naspaa.org

րում, համացանցում համալսարանների կողմից գովազդի տարածումն էական դրական ազդեցություն կարող է ունենալ: Նման գովազդի առումով, ամենակարևորը համալսարանական կայքէջերի բովանդակությունն է, որը հետաքրքրող տեղեկություններ պետք է պարունակի ինչպես համալսարանի կրթական ծրագրերի, այնպես էլ տվյալ քաղաքի տեսարժան վայրերի, կրթության և կացության գների մասին: Webometric-ի դասակարգման աղյուսակի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ համեմատության մեջ հայկական համալսարանների կայքէջերի վարկանիշն էականորեն զիջում է, ինչը վկայում է այն մասին, որ մեզանում բավարար քայլեր չեն ձեռնարկվում համացանցում գործունեությունն ակտիվացնելու տեսանկյունից:

Առկա մարտահրավերների հետ միասին, հայկական համալսարաններն ունեն մի շարք հնարավորություններ, որոնց օգնությամբ կարելի է հաջողություններ գրանցել մրցակցային այս ոլորտում: Նման հնարավորություններից են՝

- *Գեղեցիկ բնություն և հարուստ մշակույթ:* Միջազգային ուսանողներին ճիշտ ներկայացնելով Հայաստանի առավելությունները, մասնավորապես՝ հարուստ և բազմադարյա մշակույթն ու գեղեցիկ բնությունը՝ կարելի է ավելի դյուրին դարձնել կրթական ծառայությունների արտահանման գործընթացը:
- *Հավաքագրման ծառայություններ իրականացնող ընկերությունների հետ համագործակցություն:* Այս ընկերությունները մեծ ազդեցություն ունեն միջազգային ուսանողների որոշումների ընդունման վրա[25]: Հետևաբար՝ դրանց հետ համագործակցությունը, շահութաբեր պայմանների առաջարկումը կարող են էական նշանակություն ունենալ միջազգային ուսանողների ներգրավման հարցում:
- *Միջպետական կրթական համագործակցություն:* Միջպետական համագործակցությունը կրթության ոլորտում կարող է էականորեն նպաստել երկու երկրների միջև ուսանողների փոխադարձ փոխանակման գործին: Կան մի քանի երկրներ, օրինակ՝ Հնդկաստանը և Չինաստանը, որոնց հետ նման համագործակցությունն էլ ավելի նպաստավոր կլինի, քանի որ դրանք կրթական ծառայություններ ներմուծող առաջատար երկրներ են և կարող են խթանել կրթական ծառայությունների արտահանումը: Աֆրիկյան երկրների հետ կրթության ոլորտում համագործակցությունը նույնպես կարող է մեծ օգուտ բերել: Այս առումով, համագործակցության հարթակ կարող է լինել Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը, որի անդամ երկրները, օրինակ՝ Եգիպտոսը, Թունիսը, Գանան, Նիգերիան, Կամերունը կրթական ծառայություններ ներմուծողների շարքում առաջատարներ են:
- *Կրթական ծրագրերի արժեքը:* Համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ հայկական համալսարանների կրթական ծրագրերը, արժեքային առումով, ավելի հարմար պայմաններ են առաջարկում միջազգային ուսանողներին:

Այսպիսով, հիմնվելով մեր դիտարկումների վրա, կարող ենք ասել, որ թեև բազմաթիվ մարտահրավերներին, հայկական համալսարաններն այդուհանդերձ լուրջ ներուժ ունեն իրենց կրթական ծառայություններն արտահանելու համար: Հետևաբար՝ առկա մարտահրավերները հաղթահարելու և ընձեռվող հնարավորություններն օգտագործելու դեպքում Հայաստանը կարող է դառնալ կրթական ծառայությունների միջազգային շուկայի մրցունակ մասնակիցներից մեկը:

[23] Nattavud Pimpa, The Influence of Peers and Student Recruitment Agencies on Thai Students' Choices of International Education, Journal of Studies in International Education, Vol. 7(2), Summer 2003.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀՎԿ, Տարեգիրք, Կրթություն և մշակույթ, 2022:
2. CB Insughts, The complete list of unicorn companies, 2022 July.
3. European Association for Public Administration Accreditation - eapaa.eu
4. International Commission on Accreditation of Public Administration - iasia.iias-iisa.org
5. Jasvir Kaur Nachatar Singh, Jan Schapper, and Gavin Jack, The Importance of Place for International Students' Choice of University: A Case Study at a Malaysian University, Journal of Studies in International Education, Vol. 1(12), 2014.
6. Judith Eder, Wayne W. Smith & Robert E. Pitts, Exploring Factors Influencing Student Study Abroad Destination Choice, Journal of Teaching in Travel & Tourism, N10(3), 2010.
7. Nattavud Pimpa, The Influence of Peers and Student Recruitment Agencies on Thai Students' Choices of International Education, Journal of Studies in International Education, Vol. 7(2), Summer 2003.
8. Nattavud Pimpa, The Relationship Between Thai Students' Choices of International Education and their Families, International Education Journal Vol 5(3), 2004
9. Network of Schools of Public Policy, Affairs and Administration - www.naspaa.org
10. Numbeo, Cost of Living, 2023
11. Numbeo, Safety Index by Country, 2023.
12. OECD, Statistics, Enrolment of international students by country, 2021.
13. QS University Ranking, QS World University Ranking, 2023.
14. Sanjay Krishnapratap Pawar, Hirak Dasgupta & Swati Vispute, Analysis of factors influencing international student destination choice: a case of Indian HE, Journal of Further and Higher Educationm, 2019.
15. Sarah Nicholls, Influences on International Student Choice of Study Destination: Evidence from the United States, Journal of International Students, Vol. 8(2), 2018.
16. Stephen Wilkins and Jeroen Huisman, International student destination choice: the influence of home campus experience on the decision to consider branch campuses, Journal of Marketing for Higher Education, Vol. 21(1), 2011.
17. Study in Europe - www.study.eu
18. Syed Zamberi Ahmad & Frederick Robert Buchanan, Choices of destination for transnational higher education: "pull" factors in an Asia Pacific market, Educational Studies, 2016.
19. Tim Mazzarol, Geoffrey N. Soutar, "Push-pull" factors influencing international student destination choice, International Journal of Educational Management, Vol. 16(2), 2002.
20. Webometric, Ranking of World Universities, 2024.

Алик ТОРОСЯН
Младший исследователь исследовательского центра «Амберд», аспирант АГЭУ

АРМЕНИЯ И МИР

АРМЕНИЯ НА МЕЖДУНАРОДНОМ РЫНКЕ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ УСЛУГ: ВОЗМОЖНОСТИ И ПРОБЛЕМЫ

В статье рассматривается международный рынок образовательных услуг и роль Армении на этом рынке. Изучены анализы, проведенные разными авторами, которые касаются факторов, влияющих на принятие решений иностранными студентами. Проанализировав уровни этих факторов в Армении и сравнив их с данными ряда европейских стран, были выдвинуты основные проблемы, с которыми сталкиваются армянские университеты в конкурентной борьбе за иностранных студентов. Также были изучены основные возможности армянских университетов, использование которых может оказать существенное положительное влияние на экспорт образовательных услуг.

Ключевые слова: *образовательные услуги, иностранные студенты, расходы на проживание, рейтинги университетов, конкуренция*

Alik TOROSYAN
Junior Researcher at "Amberd" Research Center, ASUE
PhD Student at ASUE

ARMENIA AND THE WORLD

ARMENIA IN THE INTERNATIONAL MARKET OF EDUCATIONAL SERVICES: OPPORTUNITIES AND CHALLENGES

The paper discusses the international market of educational services and the role of Armenia within it. The analyzes by various authors are studied, regarding the factors that influence international students' decision-making. Analyzing the levels of these factors in Armenia and comparing them with data from several European countries, the main challenges faced by Armenian universities in the competition for international students were put forward. Additionally, the paper studied the main opportunities available to Armenian universities, which could positively impact the export of educational services.

Keywords: *educational services, international students, living expenses, university rankings, competition*